

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻՆ

Ապրիլի 17-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետության պետական և ոչ պետական բուհերի ուսանողական խորհուրդների վաթսուն նախագահներին:

Համահայկական միջազգային երիտասարդական կենտրոնի նախագահ Ա. Նիկողոսյանը հանուն համալսարանական երիտասարդության զորակցություն հայտնեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն և Ամենայն Հայոց Հայրապետին՝ ներկայացնելով իրենց ուղերձը.

«Այս մեծ երկնքի տակ ապրում են բազմաթիվ ազգեր, այդ թվում և մենք՝ հայերս: Դարեր շարունակ մենք պատերազմել ենք, տարել հաղթանակներ, նաև պարտություններ: Սակայն մինչ օրս մենք չենք կրել մի այնպիսի պարտություն, որը վերաբերել է մեր հավատքին ու Եկեղեցուն: Գաղտնիք չէ, որ Աստված մեր ժողովրդին մշտապես շնորհել է բազում շնորհալի զավակներ, որոնք իրենց կյանքն անգամ չեն խնայել Հայրենիքի պաշտպանման, հզորացման ու զարգացման գործում՝ սկսած Գրիգոր Լուսավորչից մինչև Պարույր Սևակ: Դարերի միջով անցել, պահպանվել, կայացել ու մինչև մեր օրերն է հասել Հայաստանի նորանկախ Հանրապետությունը: Մենք՝ երիտասարդներս, պարտավորվում ենք շարունակել ու զարգացնել այն մեծ ձեռքբերումները, որոնք մեզ են ժառանգել մեր նախորդները:

Վերջին ժամանակաշրջանում հաճախ են հանդիպում Հայ Առաքելական Եկեղեցու հասցեին ուղղված մեղադրանքներ ու վարկաբեկող հայտարարությունների: Դրանք, անշուշտ, մտահոգում են մեր երիտասարդությանը, և մենք մեր անունից ներողամտություն ենք հայցում այդ ամենի համար: Մենք անկեղծորեն հավատում ենք մեր անկախ պետության զարգացմանն ու Եկեղեցուն և մեր պատրաստակամությունն ենք հայտնում զորավիգ լինել մեր հավատքի ու երկրի ամրապնդման գործընթացին:

Խնդրում ենք նաև Ձեր օրհնությունը՝ միաբանելու ոչ միայն հայ ու Արցախ աշխարհի, այլ նաև ողջ Սփյուռքի երիտասարդությանը «Մեկ ազգ, մեկ հայրենիք, մեկ հավատք» գաղափարի շուրջ»:

Ապա երիտասարդներին իր օրհնության խոսքն ու պատգամն ուղղեց Ամենայն Հայոց Հայրապետը՝ գնահատանք հայտնելով ուսանողներին իրենց զորակցության ու նախանձախնդրության համար: «*Եկեղեցին զորավոր է իր հավատավոր զավակներով: Այդ հավատքն է, որ պահել է մեր Եկեղեցին ծաղկուն և զորեղ: Մեր ժողովրդի հավատքի զորությունն է, որ առաջնորդել է մեզ հաղթանակների*»,- ասաց Նորին Սրբությունը՝ հորդորելով երիտասարդներին զորեղ պահել սերը և միաբանությունը, համախմբվել ազգային շահերի շուրջ: Ամենայն Հայոց Կաթողիկոսն ամենքի սրբազան պարտականությունը նկատեց պահել ազգային միաբանությունը, պահպանել սերը, համերաշխությունը և հանդուրժողականության ոգին, որպեսզի կորուստներ չլինեն ազգային կյանքում:

Ի պատասխան ուսանողների անդրադառնալով Հայաստանի ներքաղաքական կյանքի վերջին իրադարձություններին և այդ առնչությամբ Եկեղեցու և Հայոց Հովվապետի հասցեին հնչող մեղադրանքներին՝ Նորին Սրբությունն ասաց, որ թե՛ նախընտրական և թե՛ հետընտրական շրջանում Եկեղեցին չթերացավ իր պարտականությունների մեջ, սակայն կատարված քայլերն անբավարար նկատվեցին: «*Եկեղեցին վերկուսակցական կառույց է, և բոլորը մեր Եկեղեցու զավակներն են: Մենք առաջնորդ ենք, հովիվ ենք, ծնող ենք մեր ժողովրդի բոլոր զավակների և հանդարտությամբ ու խաղաղությամբ պիտի քայլեր ձեռնարկենք մեր ազգի՝ սիրո վրա հաստատված միաբանության վերականգնման համար*»,- նշեց Նորին Սրբությունը: